№ 242 ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՇԱԲԱԹ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4 № 242

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ

„ՄՇԱԿ“

Էրագիրը արժէ 2 ռուբլի։ Մի ամսվանը 1 ռուբլի։

Հեղինե Պողոսեան Կասիոնիկեանց եւ Գայիանե Պողոսեան Խուսունց խորին վշտով յայտնում են ծանօթներին և բարեկամներին իրանց սիրելի եղբօր՝

ՄԱՐՏԻՐՈՍ ՊՕՂՈՍԵԱՆ ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆՑԻ

մահը, որ տեղի է ունեցել Մօսկվայում հոկտեմբերի 28-ին։

Առաջիկայ կիրակի, նոյեմբերի 5-ին, Վանքի աւագ եկեղեցում կը կատարվի հանգուցեալի եօթնօրեայ հոգեհանգիստը։ Պատարագի սկիզբը 10½ ժամին, իսկ հոգեհանգիստը 12 ժամին։ (շ.) 1—1

Յուլիսի 1-ից

ԲԱՑՎԱԾ Է

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

„ՊՕՂՈՍԵԱՆՆԵՐԻ“

Արմենակի-բազար տուն Զուլֆուխաձէի 2-րդ յարկ

Վաճառվում է ամեն տեսակ մանուֆակտուրային ապրանքներ մեծ քանակութեամբ և թռիով շատ մատչելի գներով։

առ. Հ. Հ. 20—20

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆ

Շաբաթ, նոյեմբերի 4-ին

Հայ Դրամատիկ ընկերութեան խումբը

կը ներկայացնէ

ԽԱԹԱԲԱԼԱ

Կատակերգութիւն 4 արար. և 6 պատկ.

Գ. Սունդուկեանցի։

Սկիզբը ժամը ճիշտ 8-ին։

Տեղերի գինն է 1 ր. 20-ից մինչև 20 կօպ.։

Վարչութեան հերթապահ անդամ՝ Հ. Առաքելեան

Բեժիսսեօր՝ Ց. Աբէլեան

առ. 2—2

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՍԱՓՐԻՋ“

իւմօր, սատիրիկ-սիմվոլիք

ամսաթերթ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս տեսաւ

IV-րդ համարը,

ժամուլի տակ են և շուտով լոյս կը տեսնեն V-րդ համարի հետ նաև

„ԱՆԻ“

հրատարակչ. ընկեր. գեղարուեստական բաց նամակների I սերիան

Բաժնեգինն է պրեմիաներով 2 ռուբ., իսկ Անդրկովկասեան երկրի և արտասահմանի համար 2 ռուբլի 50 կոպ.։

Հասցէ՝ С. П. Б. Казанская 46, 18.

«ՍԱՓՐԻՋ»-Ի խմբագրութիւն

ե. շ. առ. 7—25

ԱՐՏԻՍՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Երկուշաբթի, նոյեմբերի 6-ին

Հայ դրամատիկ ընկերութեան խումբը

մասնակցութեամբ տ. ՍԻՐԱՆՈՇԻ

կը ներկայացնէ

ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ

Պատմական դրամա 5 արար., իշխ. Սումբաթովի, Թարգ. Տէր-Դրիգորեանի

Սկիզբը ժամը ճիշտ 8-ին։

Վարչութեան հերթապահ անդամ՝ Ռ. Յովհաննիսեան

Բեժիսսեօր՝ Ց. Աբէլեան

առ. (շ. կ.) 2—2

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Իսահակեան

ՄԱՍՆԱԳԷՏ

Ներքին եւ վեներական

հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 11—1 ժ. երեկոյեան 5—7 ժ.

Ալեքսանդրապոլ, Սերգեեվսկայա 15, Փրիդոնովի տանը։

առ. (շ. ու. շ.) 5—100

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ

(Հալաբար, Մեսէխի վերեւի, s. № 14)

Ընդունելութիւնը բացված է (ձրի) օրվայ ամեն ժամանակ, ինչպէս և գիշերով։

(առ.) 2—2

IV

Իսկ եթէ էջմիածնում մարդկանց յարաբերութիւնները լարվել են և կամ բաւականաչափ հեղինակաւոր անձեր չը կան զգաստացնելու յանցաւոր գործողութիւնները և զսպելու կրքերը, մի՞թէ հայ ժողովուրդը զանազան տեղերից չը պէտք է հացնէ իր ձայնը էջմիածնին և կարական կերպով պահանջէ, որ վերջ տրվի այն խայտառակութիւններին, որոնք կատարվում են վեհարանի շուրջը։

Մենք կուլ տուինք մի շարք վիրաւորանքներ, մենք հանդիսատես եղանք խայտառակութիւնների, որոնցից կարմրատակում էին մեր ժողովրդի երեսները։

Բայց խայտառակութիւները չեն դադարում և սպառնում են աւելի ևս մեծանալ։

Հասարակութիւնը պէտք է այս ցաւը բուժելու միջոցներ գտնէ և դրա՞ով ապացուցանէ, որ ինքը առանց կողմնակի ցուցումների և ներշնչումների գիտէ կազդուրել և կանոնաւորել իր վարչական գործերը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Էջմիածնի դէպքերը.—Էջմիածնում տեղի ունեցած ցաւալի դէպքերի մանրամասնութիւնը հետզհետէ պարզվում է։ «Кавказское Рѣчь» լրագիրը իր երեկվայ համարում (№ 12) տպել է մի թղթակցութիւն, որ ընդհանուր առմամբ հաստատում է մեր հաղորդած տեղեկութիւնները և ցոյց է տալիս, որ այդ դէպքի մէջ տխուր դեր է խաղացել և նաև դիւանապետ Ներսէս վարդապետը։ Ինչպէս կը տեսնենք, գեներալ-նահանգապետը ի պատասխան Լևոն վարդապետի հեռագրի՝ հեռագրել է գաւառապետին, որ փողը հատուցանելու համար մի ամիս ժամանակ է տալիս, որից յետոյ անխօս պէտք է 1440 ռ. յանձնվի կառավարութեանը։ Չը գիտենք թէ այդ փողերը ո՞ր գումարից են տալու երկու հայ գիւղերը, որոնք անմա՞ս են այդ աւարառութեան մէջ, մանաւանդ Նորսը, որ նուէրներով է ապրում։

Փոխանորդը կանչել է Դեսմրիի և Նորսի վարիչներին Նախիջևան, որպէսզի սրանք ևս երկու գիւղի կողմից խնդրեն նահանգապետին, որ տուգանքը յետաձգվի։

Դեռ այս ցաւից չազատված՝ քիչ էր մնում, որ Նորսը մի այլ պատուհաս ևս կրէր։ Հարևան Թուրք գիւղի եղները մտնում են Նորսի քաւշանը։ Նորսեցիք եղները (7 հատ) բերում են գիւղ և ապա տանում տալիս Թուրքերին, որոնցից և առնում ստացագիր։ Թէև երէկվայ հարուստ Նորսը, որ իր ցորենով ամբողջ գաւառն է կերակրել, այսօր ինքը մուրացիկի դեր է կատարում, սակայն նա աչք չունի Թուրքերի եղների վրա, որոնք նրա կորցրածի համեմատութեամբ շատ ոչինչ բաներ են, յետ է տալիս։

Տարածված լուրերից մեծ հրճուանքով տեղեկանում ենք, որ վերջապէս քննութիւն է նշանակվելու Թովմա վարդապետի հաշիւների մասին, որ քննիչները շուտով գալու են Նախիջևան։

Այս քննութեան առիթով կուզենայինք հետևեալը ասել ի գիտութիւն քննիչների 1. ազատ լինել սպասելիք ճնշումներից և անաչառ քննութիւն յայտարարել. 2. շրջել գիւղերը և ստացված ապրանքների մասին այնտեղ հարցնել. 3. իսկ տեղիս հասարակութիւնը, որ գիտէ քամակից խօսել և չքմեղ ձևանալ, բարոյական պարտք ունի նուէրների բաշխման հանգամանքների նկատմամբ առանց ծածկելու և առանց վախենալու ասել ճշմարիտը. 4. այս քննութիւնը աշխատելու է բազմակողմանի կերպով կատարել։

Թալանված

—

Երևան, հոկտեմբերի 30-ին

Վերջին ժամանակներում տեղումս կեղտոտ ու մութ ոյժերը աշխատում են լարել զինուորականներին հայերի դէմ։ Այդ առիթով, ինչպէս լսում ենք, քաղաքումս զանազան ինտեր[illegible] անձնաւորութիւններ ստանում են սպառնական նամակներ։

—

Թէհրանից «Իրշադ» լրագրին ուղարկված է պարսկերէն լեզուով մի թղթակցութիւն։ Այդ թղթակցութիւնից հասկացվում է, որ Թէհրանի հայ հասարակութիւնը որոշել է մի հանդէս կազմակերպել նախկին սադրազմէ՝ Աթաբեգը ազատ Մրբոյ [illegible] պարելու։ Այդ հանդէսի նպատակն է եղել Մուզաֆֆէրէդդին Շահի շնորհած ազգային ժողովի առիթով շնորհակալութիւն և երախտագիտութիւն յայտնել Շահնշահին և մինոյն ժամանակ պարսիկ և հայ հասարակութեան հետ համերաշխութեան և եղբայրութեան մի ցոյց կազմակերպել։ Այդ հանդէսի համար Թէհրանի հայերը դիմել են նախապէս Թէհրանի հոգևորականութեան պարագլուխներին, նրանց համաձայնութիւնն ստանալու համար։ Այդ համաձայնութիւնն ստացել են և հանդէսի մասին տեսել են մեծ պատրաստութիւններ, խոշոր ծախսեր անելով։ Իսկ հանդէսից ստացվելիք մուտքը որոշել էին յատկացնել պարսիկ դպրոցներին և հայ գիւղական ուսումնարաններին։ Դէպ առ դէպ։ Հանդէսի մասին տպված յայտարարութիւններ կկցրել են Թէհրանի պատերին։

Բայց վերջին րոպէին, անկասկած զանազան մութ դաւերի և ինտրիգների շնորհիւ— ապա թէ ոչ ի՞նչպէս բացատրել այդպիսի կարգադրութիւնը—արտաքին գործերի մինիստրութիւնը, որից կախված են հայերը Պարսկաստանում, արգելում է այդ հանդէսը։

Թղթակցի խօսքով՝ պարսիկ կառավարութիւն այդ քայլն արել է նրա համար, որ համոզված է եղել, որ այդ հանդէսը կատարվում է եղել ոչ թէ ուրախանալու պարսիկների հետ ազգային ժողովը և նրանց հետ կազմելու համերաշխութեան և եղբայրութեան ցոյց, այլ ընդհակառակը, անհամաձայնութիւն, թշնամութիւն զգալու համար Պարսկաստանի շիաների և Կովկասի շիաների միջև, երկպառակութիւն առաջ բերելու շիա պարսիկների և սիւննի թուրքերի միջև։ Եւ, որ գլխաւորն է, այդ հանդէսը կազմակերպվել է համերաշխութեան և եղբայրութեան դիմակի տակ փող հաւաքելու հայոց դպրոցների համար։ Իսկ ինչ վերաբերում է պարսիկ դպրոցներին, նրանք օգնութեան կարօտ չեն ամենևին։

Սա մի թղթակցութիւն է լիքը ինսինուացիաներով, և մենք ուրախ կը լինէինք պարզված տեսնել իսկական նպատակը այդ հանդէսի արգելման։ Հայերը Պարսկաստանում միշտ եղել են անձնուէր ու բարեմիտ հպատակ Շահնշահի, և կառավարական այդ անբացատրելի քայլը կարող է նրանց յաւով մի այն լեցնել։ Մենք կը տանք այդ թղթակցութեան բառացի թարգմանութիւնը մի այլ անգամ։

—

Հետևեալ հեռագիրն է ուղարկված երէկ էջմիածին.

Սուքիաս արքեպիսկոպոսին։

Ընդունեցէք մեր խորին ցաւակցութիւնը Ձեզ, ծերունու վրայ գործ դրված քստմնելի բռնութեան առիթով։ Ձեր անձի վրա բռնութիւն կատարողներն ստորացրել են մարդկային անձնաւորութիւնը, բայց ֆիզիքական բռնութիւնը չէ դնում անձի վրայ անարգութեան դրոշմ։ Արտայայտելով մեր անսահման զղջանքը նողկալի բռնութեան կազմակերպողներին, որոնք ուղղում են մութ ամբոխը դէպի բարոյական անկում, մենք հաւատում ենք, որ ազգան պատկանում է մաքուր գաղափարի յաղթանակին, որը կը մաքրէ ժամանակակից հայկական կեանքի խեղդող մթնոլորտը։ Երբեմն հաւատարմատարներ՝ Ս. Յարութիւնեան, Յ. Սպենդիարեան, Գ. Քալանթարեան, Մ. Աթաբէկեան, Ս. Տէր-Մինասեան, Մ. Ատուռծատուրեան։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ

Լրագրներում տպագրված էին յօդուածներ էջմիածնում օգոստոսին տեղի ունեցած հայկական համագումարի մասին, ըստ որում, ի միջի այլոց, հաղորդված էր, որ համագումարի բացման թոյլտուութիւնը ստացվել էր միայն հայոց Կաթողիկոսի երկար ու անդգուռելի խնդիրքից յետոյ, և որ նա փակվել էր այն պատրակով, որ, ծրագրելով, ադմինիստրացիայի համար ոչ ցանկալի, մի քանի բարենորոգումներ, համագումարը դուրս եկաւ իր շրջանակներից, որոնք նախասահմանված էին նրա համար Կաթողիկոսի կոնդակներով։ Մատնացոյց էր անվում Նոյնիսկ, որ ներկայ դէպքում ադմինիստրացիան պաշտպանում էր Կաթողիկոսի իրաւունքները, չը նայելով որ նա ինքը ոչ միայն չը բողոքեց նրանց ոտնահարման համար, այլև պատրաստ էր զիջել իր յօժար կամքով։

Հաստատ աղբիւրներից մեզ յայտնի է, որ այս տեղեկութիւնները չեն համապատասխանում իրողութեանը։ Համագումարի թէ բացումը և թէ փակումը տեղի է ունեցել հետևեալ հանգամանքներում։ Համագումարը հրա՞ւիրված էր հայոց Կաթողիկոսի կողմից, որը պատգամաւորներ գումարեց— [illegible] կոնդակ էր [illegible] արարել դեռ մայիս ամսում։ Այդ կոնդակի հիման վրայ ամառվայ երկու ամիսների ընթացքում ամբողջ Կովկասում պատգամաւորական ընտրութիւններ կատարվեցին այդ ժողովի համար, իսկ պատգամաւորական համագումարի ժամանակը Կաթողիկոսի կողմից նշանակ[illegible] ամսում։ Մինչդեռ Կաթողիկոսը պատգամաւորական ժողով հրաւիրելու իր դիտաւորութեան մասին կովկասեան ադմինիստրացիային տեղեկացրել է նամակով օգոստոսի 3-ին, որտեղ ասված էր, որ ժողովը գումարվելու է օգոստոսի 15-ին, էջմիածնի վանքում, քննելու և կարգաւորելու մի քանի անյետաձգելի հարցեր դպրոցական, եկեղեցական և վանական գլուխների ու թեմական ժողովների խնդիրների վերաբերմամբ, որոնք նախատեսված են 1905 թվի օգոստոսի 1-ին հայոց եկեղեցական կալուածների կառավարութեան մասին հրատարակված ժամանակաւոր օրէնքներով։ Ժամանակի սղութեան պատճառով հնարաւորութիւն չունենալով պարզելու համագումարի իսկական բնաւորութիւնը և ի նկատի առնելով որ նա հրաւիրվում է հայ եկեղեցու Պետի կողմից եկեղեցական հարցերի վերաբերեալ՝ համագումարը հրա՞ւիրված էր հայոց Կաթողիկոսի կողմից, որը պատգամաւորներ գումարեց— [illegible] կոնդակ էր [illegible] արարել դեռ մայիս ամսում։ Այդ կոնդակի հիման վրայ ամառվայ երկու ամիսների ընթացքում ամբողջ Կովկասում պատգամաւորական ընտրութիւններ կատարվեցին այդ ժողովի համար, իսկ պատգամաւորական համագումարի ժամանակը Կաթողիկոսի կողմից նշանակ[illegible] ամսում։ Մինչդեռ Կաթողիկոսը պատգամաւորական ժողով հրաւիրելու իր դիտաւորութեան մասին կովկասեան ադմինիստրացիային տեղեկացրել է նամակով օգոստոսի 3-ին, որտեղ ասված էր, որ ժողովը գումարվելու է օգոստոսի 15-ին, էջմիածնի վանքում, քննելու և կարգաւորելու մի քանի անյետաձգելի հարցեր դպրոցական, եկեղեցական և վանական գլուխների ու թեմական ժողովների խնդիրների վերաբերմամբ, որոնք նախատեսված են 1905 թվի օգոստոսի 1-ին հայոց եկեղեցական կալուածների կառավարութեան մասին հրատարակված ժամանակաւոր օրէնքներով։ Ժամանակի սղութեան պատճառով հնարաւորութիւն չունենալով պարզելու համագումարի իսկական բնաւորութիւնը և ի նկատի առնելով որ նա հրաւիրվում է հայ եկեղեցու Պետի կողմից եկեղեցական հարցերի վերաբերեալ՝ համագումարը դուրս եկաւ իր համար նախասահմանված ծրագրից, իսկ առանձին անհատներ իրանց ճառերում համագումարում թոյլ են տուել շատ յանդուգն և ծայրայեղ խօսքեր արտասանել։ Իսկ բարեմիտ հայերի և վանքի միաբանութեան մէջ պատգամաւորական ժողովի փակումն անկեղծ գոհութիւն է պատճառել։

Այդպիսով համագումարի բացումը տեղի է ունեցել առանց որևէ արգելքների [illegible] նրա փակումը համաձայնասարքում է թէ Կաթողիկոսի և թէ հայ ազգաբնակութեան մեծամասնութեան ցանկութիւններին։

(«Օ. Ե.»)

ՄԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

—

Խանքենդ-աւան, 27 նոյեմբերի.—Իմ գործակալական շրջանը, որի մէջ են Աչէնի գաւառը, Ղարանդայի գաւառից 17 գիւղ և Զանգեզուրի գաւառից Ղարաղշլաղը, Հարարը և Ալիղուլին, արևելեան կողմից շրջապատված են Ադդամի դաշտավայրի բազմաթիւ թրքական գիւղերով, արևմտեան կողմից Զանգեզուրի գաւառի քրդերով, հիւսիսից Թալանի թրքերով, իսկ հարաւային կողմից Ղարանդայի հայ գիւղերն են մինչև Դիզակ։

Ղարաբաղում թուրք-հայկական ընդհարման ամենաուժեղ թափը, ամենախիստ ընդհարումները եղել են իմ գործակալական կենտրոնում, որովհետև, ինչպէս արձանագրեցի, շրջապատված են թուրքերով։ Յարձակումները եղել են արևելեան կողմից՝ Ադդամի դաշտավայրի թուրքերից և արևմուտքից՝ Զանգեզուրի գաւառի քրդերից։ Ինձ յանձնված կենտրոնումն է և պատմական Ակեարանը, որի մասին այնքան գրվեց և հետաքրքրական նիւթ տուեց լրագրութեանը և լարեց պետական պաշտօնեաների ուշադրութիւնը։ Չի մոռացված Օղերօվկու յայտնի կոչը ակեարանցիներին։

Իմ գործակալական շրջանի գիւղերը, որոնք աւելի մօտ են Ադդամի դաշտավայրին, սպասածից աւելի քաջաբար են յետ մղել թշնամու մի քանի անգամվայ կանոնաւոր պատրաստված յարձակումները։ Իրանց անձնանուէր քաջութեամբ աւելի յայտնի են խրամորթեցիք, որոնք Ադդամի թրքական կենտրոնատեղից միայն 8 վերստ հեռու լինելով՝ կարողացել են յետ մղել նրանց 3 անգամվայ յարձակումները։ Այնպէս և միւս կողմից Նախիջևանիկը, Փիրջամալը, Վարազաբոյը և Մերիշլուն դարձեալ բաւական անձնուէր և կորիզ քաջեր զոհ տալով յետ են մղել թշնամուն։ Ի նկատի առնելով երկու հայ գիւղերի մինչև անգամ հացի կարօտ վիճակը՝ նա խնդրում է տուգանքը իսպառ չառնել կամ յետաձգել, երբ գիւղերը հնարաւորութիւն կունենան վճարելու։ Ինչպէս լսեցինք, գեներալ-նահանգապետը ի պատասխան Լևոն վարդապետի հեռագրի՝ հեռագրել է գաւառապետին, որ փողը հատուցանելու համար մի ամիս ժամանակ է տալիս, որից յետոյ անխօս պէտք է 1440 ռ. յանձնվի կառավարութեանը։ Չը գիտենք թէ այդ փողերը ո՞ր գումարից են տալու երկու հայ գիւղերը, որոնք անմա՞ս են այդ աւարառութեան մէջ, մանաւանդ Նորսը, որ նուէրներով է ապրում։

Փոխանորդը կանչել է Դեսմրիի և Նորսի վարիչներին Նախիջևան, որպէսզի սրանք ևս երկու գիւղի կողմից խնդրեն նահանգապետին, որ տուգանքը յետաձգվի։

Դեռ այս ցաւից չազատված՝ քիչ էր մնում, որ Նորսը մի այլ պատուհաս ևս կրէր։ Հարևան Թուրք գիւղի եղները մտնում են Նորսի քաւշանը։ Նորսեցիք եղները (7 հատ) բերում են գիւղ և ապա տանում տալիս Թուրքերին, որոնցից և առնում ստացագիր։ Թէև երէկվայ հարուստ Նորսը, որ իր ցորենով ամբողջ գաւառն է կերակրել, այսօր ինքը մուրացիկի դեր է կատարում, սակայն նա աչք չունի Թուրքերի եղների վրա, որոնք նրա կորցրածի համեմատութեամբ շատ ոչինչ բաներ են, յետ է տալիս։

Տարածված լուրերից մեծ հրճուանքով տեղեկանում ենք, որ վերջապէս քննութիւն է նշանակվելու Թովմա վարդապետի հաշիւների մասին, որ քննիչները շուտով գալու են Նախիջևան։

Այս քննութեան առիթով կուզենայինք հետևեալը ասել ի գիտութիւն քննիչների 1. ազատ լինել սպասելիք ճնշումներից և անաչառ քննութիւն յայտարարել. 2. շրջել գիւղերը և ստացված ապրանքների մասին այնտեղ հարցնել. 3. իսկ տեղիս հասարակութիւնը, որ գիտէ քամակից խօսել և չքմեղ ձևանալ, բարոյական պարտք ունի նուէրների բաշխման հանգամանքների նկատմամբ առանց ծածկելու և առանց վախենալու ասել ճշմարիտը. 4. այս քննութիւնը աշխատելու է բազմակողմանի կերպով կատարել։

Թալանված

—

Երևան, հոկտեմբերի 30-ին

Վերջին ժամանակներում տեղումս կեղտոտ ու մութ ոյժերը աշխատում են լարել զինուորականներին հայերի դէմ։ Այդ առիթով, ինչպէս լսում ենք, քաղաքումս զանազան ինտեր[illegible] անձնաւորութիւններ ստանում են սպառնական նամակներ։

—

Թէհրանից «Իրշադ» լրագրին ուղարկված է պարսկերէն լեզուով մի թղթակցութիւն։ Այդ թղթակցութիւնից հասկացվում է, որ Թէհրանի հայ հասարակութիւնը որոշել է մի հանդէս կազմակերպել նախկին սադրազմէ՝ Աթաբեգը ազատ Մրբոյ [illegible] պարելու։ Այդ հանդէսի նպատակն է եղել Մուզաֆֆէրէդդին Շահի շնորհած ազգային ժողովի առիթով շնորհակալութիւն և երախտագիտութիւն յայտնել Շահնշահին և մինոյն ժամանակ պարսիկ և հայ հասարակութեան հետ համերաշխութեան և եղբայրութեան մի ցոյց կազմակերպել։ Այդ հանդէսի համար Թէհրանի հայերը դիմել են նախապէս Թէհրանի հոգևորականութեան պարագլուխներին, նրանց համաձայնութիւնն ստանալու համար։ Այդ համաձայնութիւնն ստացել են և հանդէսի մասին տեսել են մեծ պատրաստութիւններ, խոշոր ծախսեր անելով։ Իսկ հանդէսից ստացվելիք մուտքը որոշել էին յատկացնել պարսիկ դպրոցներին և հայ գիւղական ուսումնարաններին։ Դէպ առ դէպ։ Հանդէսի մասին տպված յայտարարութիւններ կցրել են Թէհրանի պատերին։

Բայց վերջին րոպէին, անկասկած զանազան մութ դաւերի և ինտրիգների շնորհիւ— ապա թէ ոչ ի՞նչպէս բացատրել այդպիսի կարգադրութիւնը—արտաքին գործերի մինիստրութիւնը, որից կախված են հայերը Պարսկաստանում, արգելում է այդ հանդէսը։

Թղթակցի խօսքով՝ պարսիկ կառավարութիւն այդ քայլն արել է նրա համար, որ համոզված է եղել, որ այդ հանդէսը կատարվում է եղել ոչ թէ ուրախանալու պարսիկների հետ ազգային ժողովը և նրանց հետ կազմելու համերաշխութեան և եղբայրութեան ցոյց, այլ ընդհակառակը, անհամաձայնութիւն, թշնամութիւն զգալու համար Պարսկաստանի շիաների և Կովկասի շիաների միջև, երկպառակութիւն առաջ բերելու շիա պարսիկների և սիւննի թուրքերի միջև։ Եւ, որ գլխաւորն է, այդ հանդէսը կազմակերպվել է համերաշխութեան և եղբայրութեան դիմակի տակ փող հաւաքելու հայոց դպրոցների համար։ Իսկ ինչ վերաբերում է պարսիկ դպրոցներին, նրանք օգնութեան կարօտ չեն ամենևին։

Սա մի թղթակցութիւն է լիքը ինսինուացիաներով, և մենք ուրախ կը լինէինք պարզված տեսնել իսկական նպատակը այդ հանդէսի արգելման։ Հայերը Պարսկաստանում միշտ եղել են անձնուէր ու բարեմիտ հպատակ Շահնշահի, և կառավարական այդ անբացատրելի քայլը կարող է նրանց յաւով միայն լեցնել։ Մենք կը տանք այդ թղթակցութեան բառացի թարգմանութիւնը մի այլ անգամ։

—

Հետևեալ հեռագիրն է ուղարկված երէկ էջմիածին.

Սուքիաս արքեպիսկոպոսին։

Ընդունեցէք մեր խորին ցաւակցութիւնը Ձեզ, ծերունու վրայ գործ դրված քստմնելի բռնութեան առիթով։ Ձեր անձի վրա բռնութիւն կատարողներն ստորացրել են մարդկային անձնաւորութիւնը, բայց ֆիզիքական բռնութիւնը չէ դնում անձի վրայ անարգութեան դրոշմ։ Արտայայտելով մեր անսահման զղջանքը նողկալի բռնութեան կազմակերպողներին, որոնք ուղղում են մութ ամբոխը դէպի բարոյական անկում, մենք հաւատում ենք, որ ազգան պատկանում է մաքուր գաղափարի յաղթանակին, որը կը մաքրէ ժամանակակից հայկական կեանքի խեղդող մթնոլորտը։ Երբեմն հաւատարմատարներ՝ Ս. Յարութիւնեան, Յ. Սպենդիարեան, Գ. Քալանթարեան, Մ. Աթաբէկեան, Ս. Տէր-Մինասեան, Մ. Ատուռծատուրեան։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ

—

Լրագրներում տպագրված էին յօդուածներ էջմիածնում օգոստոսին տեղի ունեցած հայկական համագումարի մասին, ըստ որում, ի միջի այլոց, հաղորդված էր, որ համագումարի բացման թոյլտուութիւնը ստացվել էր միայն հայոց Կաթողիկոսի երկար ու անդգուռելի խնդիրքից յետոյ, և որ նա փակվել էր այն պատրակով, որ, ծրագրելով, ադմինիստրացիայի համար ոչ ցանկալի, մի քանի բարենորոգումներ, համագումարը դուրս եկաւ իր շրջանակներից, որոնք նախասահմանված էին նրա համար Կաթողիկոսի կոնդակներով։ Մատնացոյց էր անվում Նոյնիսկ, որ ներկայ դէպքում ադմինիստրացիան պաշտպանում էր Կաթողիկոսի իրաւունքները, չը նայելով որ նա ինքը ոչ միայն չը բողոքեց նրանց ոտնահարման համար, այլև պատրաստ էր զիջել իր յօժար կամքով։

Հաստատ աղբիւրներից մեզ յայտնի է, որ այս տեղեկութիւնները չեն համապատասխանում իրողութեանը։ Համագումարի թէ բացումը և թէ փակումը տեղի է ունեցել հետևեալ հանգամանքներում։ Համագումարը հրա՞ւիրված էր հայոց Կաթողիկոսի կողմից, որը պատգամաւորներ գումարեց— [illegible] կոնդակ էր [illegible] արարել դեռ մայիս ամսում։ Այդ կոնդակի հիման վրայ ամառվայ երկու ամիսների ընթացքում ամբողջ Կովկասում պատգամաւորական ընտրութիւններ կատարվեցին այդ ժողովի համար, իսկ պատգամաւորական համագումարի ժամանակը Կաթողիկոսի կողմից նշանակ[illegible] ամսում։ Մինչդեռ Կաթողիկոսը պատգամաւորական ժողով հրաւիրելու իր դիտաւորութեան մասին կովկասեան ադմինիստրացիային տեղեկացրել է նամակով օգոստոսի 3-ին, որտեղ ասված էր, որ ժողովը գումարվելու է օգոստոսի 15-ին, էջմիածնի վանքում, քննելու և կարգաւորելու մի քանի անյետաձգելի հարցեր դպրոցական, եկեղեցական և վանական գլուխների ու թեմական ժողովների խնդիրների վերաբերմամբ, որոնք նախատեսված են 1905 թվի օգոստոսի 1-ին հայոց եկեղեցական կալուածների կառավարութեան մասին հրատարակված ժամանակաւոր օրէնքներով։ Ժամանակի սղութեան պատճառով հնարաւորութիւն չունենալով պարզելու համագումարի իսկական բնաւորութիւնը և ի նկատի առնելով որ նա հրաւիրվում է հայ եկեղեցու Պետի կողմից եկեղեցական հարցերի վերաբերեալ՝ համագումարը դուրս եկաւ իր համար նախասահմանված ծրագրից, իսկ առանձին անհատներ իրանց ճառերում համագումարում թոյլ են տուել շատ յանդուգն և ծայրայեղ խօսքեր արտասանել։ Իսկ բարեմիտ հայերի և վանքի միաբանութեան մէջ պատգամաւորական ժողովի փակումն անկեղծ գոհութիւն է պատճառել։

Այդպիսով համագումարի բացումը տեղի է ունեցել առանց որևէ արգելքների [illegible] նրա փակումը համաձայնասարքում է թէ Կաթողիկոսի և թէ հայ ազգաբնակութեան մեծամասնութեան ցանկութիւններին։

(«Օ. Ե.»)

ՄԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

—

Խանքենդ-աւան, 27 նոյեմբերի.—Իմ գործակալական շրջանը, որի մէջ են Աչէնի գաւառը, Ղարանդայի գաւառից 17 գիւղ և Զանգեզուրի գաւառից Ղարաղշլաղը, Հարարը և Ալիղուլին, արևելեան կողմից շրջապատված են Ադդամի դաշտավայրի բազմաթիւ թրքական գիւղերով, արևմտեան կողմից Զանգեզուրի գաւառի քրդերով, հիւսիսից Թալանի թրքերով, իսկ հարաւային կողմից Ղարանդայի հայ գիւղերն են մինչև Դիզակ։

Ղարաբաղում թուրք-հայկական ընդհարման ամենաուժեղ թափը, ամենախիստ ընդհարումները եղել են իմ գործակալական կենտրոնում, որովհետև, ինչպէս արձանագրեցի, շրջապատված են թուրքերով։ Յարձակումները եղել են արևելեան կողմից՝ Ադդամի դաշտավայրի թուրքերից և արևմուտքից՝ Զանգեզուրի գաւառի քրդերից։ Ինձ յանձնված կենտրոնումն է և պատմական Ակեարանը, որի մասին այնքան գրվեց և հետաքրքրական նիւթ տուեց լրագրութեանը և լարեց պետական պաշտօնեաների ուշադրութիւնը։ Չի մոռացված Օղերօվկու յայտնի կոչը ակեարանցիներին։

Իմ գործակալական շրջանի գիւղերը, որոնք աւելի մօտ են Ադդամի դաշտավայրին, սպասածից աւելի քաջաբար են յետ մղել թշնամու մի քանի անգամվայ կանոնաւոր պատրաստված յարձակումները։ Իրանց անձնանուէր քաջութեամբ աւելի յայտնի են խրամորթեցիք, որոնք Ադդամի թրքական կենտրոնատեղից միայն 8 վերստ հեռու լինելով՝ կարողացել են յետ մղել նրանց 3 անգամվայ յարձակումները։ Այնպէս և միւս կողմից Նախիջևանիկը, Փիրջամալը, Վարազաբոյը և Մերիշլուն դարձեալ բաւական անձնուէր և կորիզ քաջեր զոհ տալով յետ են մղել թշնամուն։ Ի նկատի առնելով երկու հայ գիւղերի մինչև անգամ հացի կարօտ վիճակը՝ նա խնդրում է տուգանքը իսպառ չառնել կամ յետաձգել, երբ գիւղերը հնարաւորութիւն կունենան վճարելու։ Ինչպէս լսեցինք, գեներալ-նահանգապետը ի պատասխան Լևոն վարդապետի հեռագրի՝ հեռագրել է գաւառապետին, որ փողը հատուցանելու համար մի ամիս ժամանակ է տալիս, որից յետոյ անխօս պէտք է 1440 ռ. յանձնվի կառավարութեանը։ Չը գիտենք թէ այդ փողերը ո՞ր գումարից են տալու երկու հայ գիւղերը, որոնք անմա՞ս են այդ աւարառութեան մէջ, մանաւանդ Նորսը, որ նուէրներով է ապրում։

Փոխանորդը կանչել է Դեսմրիի և Նորսի վարիչներին Նախիջևան, որպէսզի սրանք ևս երկու գիւղի կողմից խնդրեն նահանգապետին, որ տուգանքը յետաձգվի։

Դեռ այս ցաւից չազատված՝ քիչ էր մնում, որ Նորսը մի այլ պատուհաս ևս կրէր։ Հարևան Թուրք գիւղի եղները մտնում են Նորսի քաւշանը։ Նորսեցիք եղները (7 հատ) բերում են գիւղ և ապա տանում տալիս Թուրքերին, որոնցից և առնում ստացագիր։ Թէև երէկվայ հարուստ Նորսը, որ իր ցորենով ամբողջ գաւառն է կերակրել, այսօր ինքը մուրացիկի դեր է կատարում, սակայն նա աչք չունի Թուրքերի եղների վրա, որոնք նրա կորցրածի համեմատութեամբ շատ ոչինչ բաներ են, յետ է տալիս։

Տարածված լուրերից մեծ հրճուանքով տեղեկանում ենք, որ վերջապէս քննութիւն է նշանակվելու Թովմա վարդապետի հաշիւների մասին, որ քննիչները շուտով գալու են Նախիջևան։

Այս քննութեան առիթով կուզենայինք հետևեալը ասել ի գիտութիւն քննիչների 1. ազատ լինել սպասելիք ճնշումներից և անաչառ քննութ

ԴԱՍԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՍՔԱՊԱՏՈՒՄԱԿ

Եղուարդ Պետրոսի-Ղազարյան

(Դպրոցական կյանքից)

I

(դպ. 30-ի մեջբերումներ)

ՋԱՂԱՓՈՒՍԱԿՈՒՄԻ ՎՈՉՈՒՄԸ

Ամենասահմանափակ իսկ ուշադրությամբ մի միտք, որ ամենուրեք ամենուր ամենուրեք ամենուրեք ամենուրեք

Ամբողջ հանրությունը ոգեկոչեց Ֆ. Ֆրանսիսի հիշատակը

ԶԱՎԵՎԱՅԻ ԿՈՄՈՒՆ

Ֆ. Ֆրանսիսի հիշատակին նվիրված հանդիսությունը բացեց Զավեվայի կոմունի նախագահ ընկ. Գրիգորյանը։

Ընկ. Գրիգորյանը ասաց. «Ընկերներ, մենք հավաքվել ենք ընկեր Ֆրանսիսի հիշատակը հարգելու։ Ֆրանսիսը ապրեց ու գործեց մեր դարաշրջանում։ Նա ապրեց ու գործեց մեր դարաշրջանի ամենաբուռ ու դժվարին ժամանակներում։ Ֆրանսիսը

առարկում էին, թէ հոգաբարձութիւնը իրաւունք ունի արձակելու այս կամ այն ուսուցչին։ Անշուշտ, ամենայն մի իշխանութիւն, ֆորմալ իրաւունք ունի արձակելու որևէ պաշտօնեայի. բայց դա չէ նշանակում, որ ամենայն մի արձակումն օրինական պիտի համարվի. ամեն անդամ, երբ արձակում են երկար տարիներ ծառայող մարդուն, անում են այդ բանը մեծ զգուշութեամբ. այն էլ միայն ծայրայեղ դէպքում, երբ ուրիշ ելք չը կայ։ Արձակվին էլ պէտք է պատճառաբանված լինի և հիւսված անհերքելի ապացոյցների վրա. հակառակ դէպքում՝ դա կը լինի միայն կամայականութիւն և ուրիշ ոչինչ։ Ուսուցչին էլ կարելի է արձակել միայն այն դէպքում, երբ նա միանգամայն անբարեխիղճ է և իր կոչմանն անարժան։ Բայց անհակառակելի է թէ ինչու նոր հոգաբարձութիւնը թոյլ տուից իրան դպրոցի գործերին բոլորովին անտեղեակ և անծանօթ լինելով հանդերձ, այդ տեսակ անարդար և վրդովեցուցիչ վճիռ կայացնել. նա ապերախտ մոռացութեան մատնեց ուսուցիչների բազմամեայ ու բարեխիղճ ծառայութիւնը։

Որովհետև այդ վճիռը իմ կարծիքով աւելորդի է, ուստի ես, իբրև քաղաքացի, իմ սուրբ պարտականութիւնս եմ համարում չենթարկվել այդ վճռին։

Ինչ վերաբերում է հոգաբարձութեան թղթի այն խօսքերին, որ «մանաւանդ ձեր մասին կար նաև նախկին տեսչի պաշտօնակատարի գրաւոր զեկուցումը», դրա մասին ես պիտի նկատեմ, որ պ. Մալխասեանցի զեկուցման մէջ իմ մասին ասած է, որ ես լաւ արդիւնաւոր ուսուցիչ եմ և միևնոյն ժամանակ ջղային մարդ եմ, իբրև թէ այնքան ջղային, որ արժանի եմ արձակման։

Թէ պ. Մալխասեանցը իմ մասին լաւ կարծիք է յայտնել իբրև ուսուցչի, այդ ես ի հարկէ ապասում էի նրանից, որովհետև նախ-և-առաջ հակառակը ասել անկարելի է, երկրորդ՝ ինքը պ. Մալխասեանցը մի քանի անգամ լինելով իմ դասերին և իմ քննութեան՝ յայտնել է թէ ինձ իր գոհութիւնը և թէ աշակերտներին՝ ասելով, որ պ. Մելիք-Ալլահվերդեանը այնպիսի ոգևորութեամբ է պատմում, որ մեծ գովեստի արժանի է։ Նոյնը՝ աւելի անկեղծ կերպով՝ միշտ և ամենայն տարի յայտնել են ինձ և իմ աշակերտները. նրանք միշտ շնորհակալ են եղել ինձանից և ասել են, որ ես շատ լաւ և պարզ կերպով բացատրում եմ ֆիզիկայի և ֆիզիքական աշխարհագրութեան հարցերը և հաղորդում եմ այդ գիտութիւններից ամենահետաքրքիր տեղեկութիւններ։ Իմ հին աշակերտները երբ պատահում են ինձ, մօտենում են և ասում, որ մենք միշտ յիշում ենք ձեզ և երջանիկ ենք զգում, որ ձեր աշակերտն ենք եղել։ Նը-բանք այժմ գալիս են և ցաւակցում, որ դպրոցը զրկվել է ինձ նման ուսուցչից։

Եթէ այդ բանը գիտէր պ. Մալխասեանցը, ինչու՞ նա թոյլ տուից իրան գնել իմ արձակման հարցը. միթէ՞ նա չէր հասկանում, որ շատ դժուար կը լինի ինձ փոխարինել։ Ի հարկէ նա շատ լաւ էր հասկանում, բայց նրա անձնական կիրքը դէպի ինձ յաղթեց նրա նպատակաւոր կարծիքը։

Պ. Մալխասեանցը՝ ցանկանալով հասնել իր նպատակին՝ և չը կարողանալով ուրիշ պատճառ բերել, հնարեց իմ ջղայնութիւնը։ Այդ կարծիքը ես համարում եմ զուտ զրպարտութիւն. բայց չեմ կամենում խօսել դրա մասին մանրամասնօրէն լրագրի մէջ, որովհետև լրագիրը, իմ համոզմամբ, պիտի հեռու լինի դանդաղ անձնական հաշիւներից։ Ես կը յանձնեմ այդ գործը ընկերական դատի և կը պահանջեմ պ. Մալխասեանից այն բաւարարութիւնը, որը նա պիտի ինձ տայ, որովհետև նրա զեկուցումն է եղել իմ արձակման պատճառը։

Աղեքսանդր Մելիք-Ալլահվերդեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասի Փոխարքան առաջարկել է իշխ. Ե. Ն. Տրուբեցկոյին ընդունել Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուի պաշտօնը։ Տրուբեցկոյը մի ընդարձակ նամակով հրաժարվել է այդ պաշտօնից։ («Рус. Сл.»)։

—

Թիֆլիսում հիմնվող պոլիտեխնիկումի գլխաւոր մասնաժողովը դիմել է Անդրկովկասում հրատարակվող բոլոր լրագիրների խմբագրութիւններին, խնդրելով տպագրել պոլիտեխնիկում հիմնելու համար նուիրատուութիւններ հաւաքելու կոչը։

—

Թիֆլիսում հիմնվող պոլիտեխնիկումի գլխաւոր կոմիտեսը վճռել է մօտ օրերս դիմել հիմնարկութիւններին, որոնք խոստացել են յատկացնել որոշ գումարներ, խնդրելով մոցնել վերջինները պետական գանձարանը։ («Кав.»)։

—

Նոյեմբերի 1-ին կայացաւ Թիֆլիսում հիմնվող պոլիտեխնիկումի տեխնիքական կոմիտեսի նիստը։ Նիստին հրաւիրված էին նաև քաղաքային իշխէներ Ի. Ի. Կօզնօվլիցկին և մասնաժողովի նախագահ—քաղաքային կալուածքների կառավարիչ Ս. Զ. Միրզոյանը։ Վերջինը մասնաժողովին տեղեկութիւններ տուեց Հաւլաբարի և Կուկիայի բայսներում գտնվող քաղաքային բոլոր ազատ հողերի մասին։ Մասնաժողովը չեկաւ ոչ մի եզրակացութեան պոլիտեխնիկումի տեղի վերաբերեալ և վճռեց նախ տեղի վրա քննութիւն կատարել, որը և նշանակվեց նոյեմբերի 2-ին, բայց անձրևի պատճառով յետաձգվեց անորոշ ժամանակով։

—

Նոյեմբերի 2-ին, ցերեկվայ ժամը 4-ին, 7 զինված չարագործներ մտել են Անդրիասեանի և Մարտիրոսովի խանութը (Մէջին փողոցում) և վերցնելով մօտ 15,000 բուբլու գումարի փող և ոսկեղէն, անյայտացել են.

—

Նոյեմբերի 2-ին, երեկոյեան ժամը 5-ին Անդրեեվսկի և վոկզալնի փողոցների անկիւնում, ամբոխով լիքը եկեքարքարշի վագոնում թռել էին մի քանի զինված չարագործներ. վագոնում նստողները վախից իսկոյն ցրվել էին զանազան կողմերը, մնացել էր միայն մէկ Աւստրիայի հպատակ Ֆօմա Լէբէդան, որից չարագործները խլել էին 79 բուբլի փող և անյայտացել։

—

Նոյեմբերի 2-ին, կէս գիշերին Թառայեանցի պտղատուի հագուստեղէնի խանութի (Միքայէլեան և Մօստովոյ փողոցների անկիւն) առաստաղում անցք փորելով մտել են խանութը և գողացել են 3000 բուբլու պտղատուի հագուստներ։ Ձերբակալված են Սերգէյ Լազարեվը և Միխայիլ Տրօֆանովը։ Գողացված ապրանքը գտնվել է։

—

Թիֆլիսի գաւառում Երևանեան խճուղով անցնող 50 թուրքերի վրա յարձակվել են հրացաններով և ատրճանակներով զինված 12 չարագործներ և մինչև վերջին թելը կողոպտել են նրանց։ Կողոպտողներին ձերբակալելու համար կօզակներ են ուղարկված։

—

Շահալի կայարանից հաղորդում են, որ նոյեմբերի 1-ին 128 վերստ տարածութեան վրա ապրանքատար գնացքը խորտակվել է։ Կօնդուկտներ Լիտիկուսը և Ամիրխանեանը ծանր կերպով վիրաւորվել են։ Սաստիկ ջարդվել են ապրանքով լիքը 2 վագօններ, իսկ հինգ վագօն աննշան կերպով. վագօններից երկուսը գծից դուրս են եկել։ Խորտակման պատճառը չէ պարզված։

—

Բագուի և Ալէքսանդրապօլի կողմերը երկաթուղու գնացքների կանօնաւոր երթևեկութիւնը վերանորոգված է, որը դադարեցված էր Սագիրի կայարանում և Շահալը-Ղարաքիլիսայի միջև տեղի ունեցած երկաթուղու գնացքի խորտակման պատճառով։

—

Բազվում կիրակի կայացաւ Բագուի վրացի ընկերութեան արտակարգ ընդհանուր ժողովը իշխ. Ի. Ի. Դադիանի նախագահութեամբ։ Վիճաբանութիւններից յետոյ ժողովը որոշել է՝ 1) փակել մի տարի ժամանակով, գոյութիւն ունեցող վրաց ընթերցարանը և բոլոր ստացվող վրացերէն լրագիրները յանձնել տեղական ընթերցարաններից մէկին, որի հետ համաձայնութիւն կայացնել, որպէս զի տեղական վրացիները ձրիապէս օգտվեն ընթերցարանից. 2) նոր շինութիւն կառուցանել վրաց թատրոնի, գրադարան-ընթերցարանի, գիշերային ապաստարանի, էժանագին ճաշարանի և այն յատկացնելու համար ընտրել առանձին մասնաժողով, որը կը միջնորդէ քաղաքային վարչութեան առաջ՝ ձրի հող յատկացնելու. բոլոր եկամուտների 75% վերցնել առն կառուցանելու համար. 3) հաստատված է, որ վերջին ժամանակներս տեղական ձեռնարկութիւնները ինչ որ անյայտ պատճառներով չեն ընդունում վրացի բանուորներին գործի, որի պատճառով վերջիններս սարսափելի չքաւորութեան մէջ են. վճռված է հարցանել այդ բանի առիթով վրացի-բանուորներին՝ նախապէս այդ հարը յանձնելով բանուորական կազմակերպութիւնների քննութեանը և 4) ընդհանուր ժողովը առանց փոփոխելու ընդունեց բայսոների մասնաժողովների համար ընկերութեան վարչութեան հրանգների խմբագրելը։ («К»)։

—

Նաւթարդիւնաբերական խորհրդի որոշման համաձայն, բայսոներում բացված երեք դրպրոցից մէկը պէտք է լինի մահմեդական։ Այդ դպրոցը հիմնվում է Բիբի-Էյբաթում և դրա համար էլ բաւական թուով աշակերտներ արձանագրվել են ու դպրոցը արդէն բացվել է։

—

Նոյեմբերի 1-ին, ժամը 10-ին, Բագու քաղաքի դաշի Աղա-Միր Մէհմէդ Ֆեարիմ, «Հէդայէթ» ժողովի նախագահը հրաւիրել է այդ ժողովի անդամներին, հետևեալ հարցերի քննութեան համար։ Առաջին՝ Մաշտաղա քէնդում Հաջի Աբու-Դաւիթի տղերանց և Աբդիլ Ազիմի տղերանց միջև տեղի ունեցող դէպքերը։ Այդ խնդիրը գներալ-նահանգապետն է յանձնել «Հէդայէթ»-ի քննութեան, որպէսզի ժողովը տեսնէ թէ ինչ ձևով պէտք է լուծել այդ խնդիրը։ Երկրորդ՝ մի քանի օր առաջ ծովեզերքում տեղի ունեցող հրացանագործութեան դէպքը։ Երրորդ՝ անցեալներում, կասիմ բէգի մզկիթում տեղի ունեցող թիւրիմացութեան դէպքերը։ Չորրորդ՝ մտածել և գտնել այն միջոցներն ու կարգադրութիւնները, որ պէտք է ձեռք առնել, Բագուի շրջակայ գիւղերի համար։

—

Հոկտեմբերի 24-ին առաւօտեան ժամը 7-ին Ախալցխայում, Ալէքսանդրովկի փողոցում եղող Խաչատուրեանի սրճարանում տեղացիներից երկուսը—Մաթէոսեանցը և Աղամեանցը ատրճանակի հարուածներով ծանր կերպով վիրաւորել են Մանուկ Արամեանցին։ Արամեան վիրաւորելը հետևանք է այն վիճաբանութեան, որը ծագել են նրանց մինչև մասամբ կուսակցական հողի վրա, բայց գլխաւորապէս, իսկական—ընտանեկան յարաբերութիւնների պատճառով։ Ցանցաւորները անյայտացել են և չեն ձերբակալված։

—

Ախալցխայի դաւառից հաղորդում են, որ հոկտեմբերի 20-ին, ցերեկվայ ժամ 12 ժամին Ինդուսա-սու աւանում 4 զինված չարագործներ յարձակվել են ախալքալաքցի հայեր՝ Տէր-Գրիգորեանի, Նազարէթեանի և Մոսիկօվի վրա և կողոպտել են։ Կողոպտողներին հայերը չեն ճանաչել։

—

Նոյեմբերի 2-ին Կվիրիլայում զինուորական-դաշտային դատարանը դատապարտել է գուրիացի Տրօպիձէին, որը մեղադրվում էր քահանայ Փերձէի սպանութեան մէջ, մահվան դատավճիռը ի կատար է ածվել։

—

Սրանից մի քանի ժամանակ առաջ Ագուլիսի մօտիկ Հանգաժիջի ճանապարհի վրա «Սարի Դուզ» կոչված տեղում սպանվել էր մի թուրք մրգավաճառ։ Ցանցաւորները անյայտ էին և որովհետև սպանութիւնը կատարվել էր Ագուլիսի սահմաններում, այդ պատճառով նրա վրա տուգանք է նշանակված 900 բուբլի։

—

Հոկտեմբերի 23-ին Անապայի բանտում պատուհանից ձգված են հակակառավարչական թռուցիկներ։ Ցանցաւորը ձերբակալված է։

—

Մի քանի բարձրաստիճան կալուածատէրեր ներկայացրել են Սուլիպինին ագրարական բարենորոգումների մի նախագիծ մանաւորը հողերը ստիպողաբար գրաւելու մասին։ Ագրարները խնդրել են միևնոյն ժամանակ որպէսզի այդ նախագիծը ներկայացվի Բարձրագոյն բարեհայեցողութեանը։ Սուլիպինը այդ նախագիծը յանձնել է իշ. Վասիլչիկովին։

—

Պետերբուրգի համալսարանի չքաւոր ուսանողներին նպաստամատոյց ընկերութիւնը վճռել է իր հաւատարմատարներին ուղարկել զանազան քաղաքներ իր պարքերը հաւաքելու համար, որոնց գումարը 600,000 բուբլուց աւելի է։ Ընկերութեան պարտականների թւում շատ վաղուց է որ գտնվում է և Վուխանցովը։ Կիլէվում եղած ժամանակ ընկերութիւնը նրան ուղարկել է երկու հրաւիրաթղթերը պարքը վճարելու համար, բայց պատասխան չէ ստացվել։ Երրորդ հրաւիրաթուղթը ուղարկել են իւրիսկօնսուլի միջոցով, որը սպառնացել է դատարանի դիմել։ Վուխէը յայտնել է, որ «տասնամեայ ժամանակամիջոցը պարտքի վաղուց է արդէն անցել»...

—

Պարիզից հեռագրում են «Рус. Сл.»ին, որ եթէ ռուսական նոր փոխառութիւնը իրականանալու էլ լինի, նա բաց կը թողնվի այդ դէպքում ոչ թէ Պարիզում, այլ՝ մի որևէ չէզոք շուկայում։ Հոռվմում կամ թէ Բրիւսելում, բայց, ի հարկէ, գլխաւորապէս ֆրանսիական կարիէրը յոյս ունի թագցնել իր մօտիկ մասնակցութիւնը փոխառութեան մէջ։

—

Պաշտօնական վերջին տեղեկագրութիւններից երևում է, որ Բօգովօ-Վարշաւա-Վիէննայի երկաթուղային կայարանում պատահած գնացքի վրա կատարված յարձակման ժամանակ կողոպտիչները տարել են ընդամենը 63,846 բուբլի, որոնց թւում 20,000 բուբլու բանկային մուրհակներ և 6,000 բուբլու գիւղացիական հողային բանկի վկայականներ։ («О. Б.»)

—

Հոկտեմբերի 27-ին Պետերբուրգի քաղաքապետի հրամանով առաջարկված է ոստիկանական դեպարտամենտին միջոցներ ձեռք առնել գտնելու նորերս գողացված եռաձեռան դնդակները, իր երկու արկ փամփուշտներով և այլ պարագաներով։ («Рѣчь»)։

—

«Сѣв. Л.» լրագիրը հաղորդում է, որ Արխանգելսկի թեմական իշխանութիւնը սինոդից մի շրջաբերական է ստացել, որով առաջարկվում է ստորագրութիւն առնել բոլոր քահանաներից, սարկաւագներից, տիրացուներից և եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցիչներից այն մասին, որ նրանք չեն պատկանում և չեն պատկանելու ոչ մի կուսակցութեան, որ ներկայումս հակառակ ընթացք բռնել կառավարութեան դէմ։

—

Հոկտեմբերի 25-ին և 26-ին Պետերբուրգի բարձրագոյն դպրոցների հրէայ ազատ ունկնդիրներն ու ազատ ունկնդրուհիները քաղաքի ոստիկանմասերն են եղել կանչված, որտեղ նրանցից ստորագրութիւն են առել մայրաքաղաքից հեռանալու համար։ («Рѣчь»)

—

Մայրաքաղաքի թերթերից քաղելով մենք հաղորդել էինք, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստր ֆօն Կանֆմանը թողնում է իր պաշտօնը։ Այժմ «О Б.»ն կարգան կերպով հաղորդում է, որ այդ լուրերը բոլորովին անհիմն են, և որ առհասարակ, մինիստրական խորհրդի կազմի մէջ որևէ փոփոխութիւն անելու մտադրութիւն չը կայ։

—

Խուզարկու ոստիկանութիւնը հեռագրով առաջարկել է բոլոր ոստիկանմասերին խիստ միջոցներ ձեռք առնել որոնելու նահանգական դատարանից տանելու ժամանակ կորած է 102 արձանագրութիւնները, որոնք ինչպէս ենթադրվում են, մոռացմամբ թողնված է կառքում։ Հոկտեմբերի 27-իվ այդ նպատակով հարց ու փորձի է ենթարկել ոստիկանութիւնը բոլոր կառապաններին։ («Рѣчь»)

—

Թւերը աւելի են պերճախօս քան խօսքերը Ահա նրանք 1906 թուի յուլիսի 1-ից մինև սեպտեմբերի 1-ը Վաշտալայում կատարվել են հետևեալ դէպքերը, որ մեր ներկայ «փոթորկալի ժամանակի» համար վերին աստիճանին ընծայող երևոյթներին, 1) 27 խողոր գործադուլներ 2) 9 ագամ մեծ, բայց առանց արիւնհեղութեան կատարված, տերօրիստական ակտեր 3) 105 սպանութեան և մահաբերիչ դէպքեր, որոնք կատարվել են կուսակցութիւններից որոշմամբ և որոնց ժամանակ սպանվել են 45 հոգի, 4) պատահաբար վիրաւորվել են նոյն ժամանակ 8 հոգի և 1 հոգի էլ սպանվել է, 5) ոստիկանութեան վրա կատարված է 79 յարձակում և տեղն ու տեղը սպանված է 36 հոգի, 6 ադմինիստրացիայի բարձր պաշտօնեաների վրա մահափորձ է արված 6 անգամ, սպանված է 2-ը, ոստիկանների վրա անջող յարձակումներ՝ 13, 8, ոստիկանները ինքնապաշտպանութեան համար վիրաւորել են 3 դէպքում, 9) զինուորների կողմից վրեժառութեան դէպքեր՝ 219, որի մէջից տեղն ու տեղը սպանված է 44 մարդ, 10 կողոպտիչները էքսպրոպրիացիաներ կա, տարել են 107 անգամ, մասնաւոր փողեր գողացել են 38,500 բուբլի, 11) կողոպտիչները կատարել են 25 անաչնդ յարձակումներ։ 12) կողոպտիչները 12 դէպքում մարդիկ են վիրաւորել, 6 մարդու համար վերքերը մահաբեր են եղել, 13) կալանաւորվել են 56 կողոպտիչներ, վիրաւորվել են՝ 2, սպանվել՝ 4, 14) խոշոր կողոպտման դէպքեր եղել են 76-իսկ գողացված գումարները՝ 82,400 բուբլի, 15) պետական փողերի էքսպրոպրիացիաներ տեղի են ունեցել 56 անգամ եւ-ընդհանուր պատերը հետևեալն է սպանվել է տեղն ու տեղը 134 հոգի, ծանր վիրաւորվել, 307, հեռաւոր զոհերի ընդհանուր թիւն է 441։ «Այդ արեան ստատիստիկային» կարելի է աւելացնել ինքնասպանութեան 44 դէպքերը սոցիալական-քաղաքական հողի վրա։ Կասկած չը կայ, որ այդ թիւերը դեռ աւելի ևս խոշոր պէտք է լինեն. որովհետև «զղաղացման» բոլոր դէպքերը չեն յիշատակված և մամուլի էջերում փաստերը ոչ լրիւ չեն լոյս տեսել։ Զի որ բոլոր վիրաւորները դիմում շուտափոյթ օգնութեան», սպանվածներին օգնութիւն ցոյց տալու համար «շուտափոյթ օգնութեան դիմելու հարկ չը կայ, «էքսպրոպրիացիայի» դէպքերի մասին ամենքը չեն հաղորդում ոստիկանութեանը. որոնց անզգուութիւնը երևում է հէնց առաջ բերված թիւերից։ Այսպէս օրինակ մի անմօռաց օր «շուտափոյթ օգնութեան» դիմել են 160 վիրաւորներ, մինչդեռ նրանց թիւ ամենաքիչը 2 անգամ աւելի է եղել։

—

ՆՈՒԽՈՒՑ մեզ գրում են. Նուխու հայ դպրոցների ուսուցչական խումբը (յօգուտ յիշեալ դպրոցների) հոկտեմբերի 28-ին ներկայացրեց «Ոճրագործի ընտանիքը», ողբերգութիւն 5 գործ.։ Դահլիճը լիքն էր երկաթ հասարակութեամբ։ Զուտ արդիւնք մնաց 230 բուբլի։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 նոյեմբերի։ Բնակարանային տուրք չը վճարող կեցողներից Պետական Դումայի ընտրութիւններին մասնակցելու ցանկութիւն են յայտնել 12,500 հոգի։

ԲԵՐԼԻՆ, 2 նոյեմբերի։ Բէյլիսսագում, գարձեալ Ռուսաստանի մասին խօսելով, Բիւլօվը շարունակել է. «Ես մի առանձին հաճութեամբ եմ արձանագրում այն հանգամանքը, որ մեր յարաբերութիւնը դէպի Ռուսաստանը լաւ են և բարեկամական. ես իմ դիպլոմատիական յիշողութիւններում շատ և շատ եմ վերադառնալու, որ բաղխիմ (ազաւաղում), քանի որ մեր Կայսրի և Ռուսաց Միապետի միջև եղած յարաբերութիւնները նպաստեցին փոխադարձ վստահութիւնն պահպանելուն, վստահութիւն, որ լաւագոյն գրաւականն է հանդիսանում եւրոպական խաղաղութեան համար։ Միապետների տեսակցութեան ժամանակ խօսք չէ եղել ռուսաց ներքին քաղաքականութեան մասին, առաւելապէս այն մտքով թէ Գերմանիան ըէակցիօնէր խորհուրդներ է տալիս. տեսակցութիւնը նպաստեց հեռացնելու ռուս-գերմանական յարաբերութիւններից անվստահութեան և անբաւականութեան վերջին ստուերները։ Այժմ արդէն երկու միապետներն էլ համոզված են փոխադարձ խաղաղ, բարեկամական և լոյալ մտադրութիւններին։ Ռուսաստանին ներկայումս հարկաւոր է ոյժ՝ ներքին կեանքը վերանորոգելու համար։ Մի քանի ամիս է, արդէն, որ ռուս և անգլիական կառավարութիւնների միջև բանակցութիւններ են վարվում։ Եւ անշուշտ վերջ ի վերջոյ համաձայնութիւն կը կազմվի կենտրօնական Ասիայի վերաբերմամբ, ուր տիրում է հնչաւորը անգլօ-ռուսական անտագօնիզմը—Տիբէտի, Պարսկաստանի և Աւղանիստանի նկատմամբ։

ՄՕՍԿՎԱ, 2 նոյեմբերի։ Խամօվնիկ թաղում կատարած խուզարկութեան ժամանակ գտնվել է ռումբերի պահեստ, մի ուրիշ տեղ եռևան է հանած զէնքերի, ատրճանակների և փամփուշտների պահեստատեղիներ։ Ընդհանուր առմամբ քաղաքի զանազան տեղերում ձերբակալված են քսանից աւելի մարդ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 նոյեմբերի։ Արտակարգ հսկողութեան հիման վրա քաղաքապետը դադարեցրել է «Русь» լրագրի հրատարակութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 նոյեմբերի։ Կոմս Վիտէն՝ ի նկատ առնելով այն հանգամանքը, որ վերջերս մամուլի մի մասը սխալ կերպով է լուսաբանել նրա առ բանւոր պատգամաւորների խորհուրդը ունեցած վերաբերմունքը, մի նամակ է ուղղել «Нов. Вр.»-ին, որի մէջ յայտնում է, որ խորհրդի կազմակերպվելը, գործադուլներ կազմելը և բանւորական մասսաների յեղափոխական ամենամայրահեղ ասպիրանտներին հասցնելը տեղի է ունեցել մինչև հոկտ. 18-ը, նա երբէք չէ իմացել այդ, ոչ մի բանում խառը չէ, երբէք չէ տեսել և ցանկութիւն չէ ունեցել տեսնելու, խորհրդի հետ ոչ պաշտօնապէս և ոչ էլ կողմնակի կերպով գործ չէ բռնել. խորհուրդը ձերբակալվեց և արդարադատութեան ձեռքը յանձնվեց, երբ կառավարութիւնը—այդ ժամանակ Պետերբուրգի անցքած բարդ հանգամանքների պատճառով—այդ ժամանակին յարմար համարեց։ Կառավարութեան գործողութիւնների կանոնաւորութեան հարցը կարող է անկողմնապահութեամբ քննվել ապագայում, երբ կը պարզեն և կը վերանայ կրքերը, որտեղից կարող եմ ասել, որ եթէ ես դժբախտութիւն ունենայի Պետերբուրգի նկատմամբ գործել այն պայմաններով, որ եղան հոկտեմբերին և հետևեալ ամիսներում, այդ դէպքում կը վարվէի այնպէս, ինչպէս այն ժամանակ։

ՏՕԿԻՕ, 2 նոյեմբերի։ «Ասախի Տիմբուն»-ը հաղորդում է, որ Սախալինում կառուցվող երկաթուղագծերի աշխատանքները առաջ են գնում եռանդուն կերպով։—Ներքին գործերի մինիստրութիւնը համաձայնել է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ծրագրին, որի համաձայն ժողովրդական պարտադիր կրթութեանը ժամանակամիջոցը երկարեալ է 4-ից 6 տարի. յաւելեալ ծախսը—մօտ մի միլիոն է լինելու։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան վերջին հաշուի համաձայն, Եապոնիայում ուսանում են 97% երեխաներ։

3 նոյեմբերի

ՄՕՍԿՎԱ, 2 նոյեմբերի։ Առաւօտեան պատերազմա-դաշտային դատարանի վճռով մահվան պատժի է ենթարկվել Բէյնբօսի կեանքի դէմ մահափորձողը։

ՐԻԳԱ, 2 նոյեմբերի։ Զինված յարձակում գործելու և աւազակութեան համար երեք գիւղացի պատերազմա-դաշտային դատարանից մահվան են դատապարտվել։ Դատավճիռը ի կատար է ածված։

ԼՕՆԴՕՆ, 2 նոյեմբերի։ Համայնքների պալատում ծովապատութեան քարտուղար Ռոբերտսօնը երէկ յայտնել է, որ Պօրտսմուտի անկարգութիւններին մասնակցած 11 նաւաստիները յանձնվելու են զինուորական դատարանին։

ՍԱՆ-ՖՐԱՆՑԻՍԿՕ, 2 նոյեմբերի։ «Սան-Ֆրանցիսկօ-Դէյլի-Խրօնիկլ» լրագրի ասելով, երկրաշարժից վնասվածներին օգտին նուիրած գումարներից իւրացված է 1 միլիոն դոլար։ Գործը քննելու է դաշնակցական դատարանը։

ՎԻԼՆՕ, 2 նոյեմբերի։ Կօվնայում սահմանային պահակախմբի ձեռքով ձերբակալված է 57 հոգուց բաղկացած մի ցաւել ռազմիկ խումբը։

ՄՕՍԿՎԱ, 2 նոյեմբերի։ Երէկ ձերբակալված 20 հոգին անիշխանականների կազմակերպութիւնից են, որ մերձ կապ ունի քաղաքապետի կեանքի դէմ կատարած մահափորձի հետ։

ՊՐԷՏՕՐԻԱ, 2 նոյեմբերի։ Բուր գենեռալ Բօտան Տրանսվալի կառավարութեան իր ծառայութիւնն է առաջարկել՝ կուռելու ապատամբների հետ։

ԲԵՐԼԻՆ, 2 նոյեմբերի։ Բիւլօվը երէկվայ ճառում դիմել է սոցիալ-դեմօկրատներին, նրանց գործողութեան ձեր ռուս-գերմանական յարաբերութիւնների գործում անգործնական և խստագոյն մեղադրանքի արժանի գտնելով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 նոյեմբերի։ Կարող ենք յայտնել, որ կոմս Վիտէին՝ Պարիզում դեսպան նշանակելու մասին տարածված լուրերը սխալ են։ Կոմսը Պետերբուրգ է եկել մի քանի օրով, և շուտով, հաւանօրէն կը մեկնի Բրիւսէլ, իր դատեր մօտ։ Կոմսը հիւանդի տեսք ունի, խօսում է խզոտ ձայնով և մեծ դժուարութեամբ—ժողովրդական լուսաւորութեան մինիստրը բարձրագոյն բարեհայեցողութիւն է խնդրում՝ իր իշխանութեան մէջ զգալի ապակենտրօնացում մտցնելու։ Առևտրի մինիստրը նոյեմբերի 2-ին Թիֆլիսի ստուգիչ պալատի գործունէութիւնը տարածել է Բաթումի շրջանի և Սուխումի վիճակի վրա։

ՄՕՍԿՎԱ, 2 նոյեմբերի։ Բացվեց խաղալ վերածնութեան կուսակցութեան բիւրօն։ Անդամներ են գրվում գլխաւորապէս աշխողմեան սահմանադիր-ռամկավարները, ձախակողմեան հոկտեմբերականները և առաջադիմական գործարանատէրերի և ֆաբրիկանտների մեծ մասը, որ սկզբում անդամներ են եղել քաղաքայված առևտրա-արդիւնաբերական կուսակցութեան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 նոյեմբերի։ Պալատում վերջնական ձևով յայտարարված է բանւոր պատգամաւորների խորհրդի դատավճիռը։ Մեղադրվողները չեն ցանկացել ներկայ գտնվել։ Դատավճիռը յայտարարել են դատարկ դահլիճում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԲ, 2 նոյեմբերի։ Հոկտեմբերի 30-ին զինուորա-բժշկական ակադէմիայի ուսանողները մի բանաձև են կայացրել, որի մէջ ի միջի այլոց ասված է. «Որպէս յեղափոխութեան համակրող և նրա աջողութեանը նպաստող մի տարբ, մենք, ակադէմիայի ուսանողներս, հանգամանքից օգտվելով մեր համակրանքն ենք յայտնում բանւոր պատգամաւորների խորհրդին և յայտնում ենք, որ մենք համամիտ և համերաշխ ենք յեղափոխական պրօլետարիատի հետ։ Զինուորական մինիստրը ծանօթանալով ակադէմիայի կառավարչի միջոցով բանաձևի ձևագրի հետ և ի նկատ առնելով նրա մէջ արտայայտած կարծիքները, նախ քան ակադէմիայի վերաբերմամբ որևէ միջոցի ձեռնարկելը, համաձայնել է երեքօրեայ ժամանակ տալ գումարելու նոր ժողով, որը պէտք է աւելի կանոնաւոր ճանապարհով պարզէ ուսանողների մեծամասնութեան դէպի այդ բեզօլիւցիան ունեցած իսկական վերաբերմունքը։ Այդ առիթով, ուսանողները հոկտեմբերի 30-ին վերստին ժողովվեցին և նոր բանաձև կայացրին, որին կողմակից են եղել ներկայ եղող 590 մարդուց 390-ը։ «Համաակադէմիական ժողովը ոչ մի հիմք չէ գտնում՝ վերքննելու հոկտ. 30-ին կայացրած բանաձևը և հաստատ համոզմունք է յայտնում, որ ներկայ մօմէնտին պատճառներ բնաւ չը կան—խախտելու կանոնաւոր ընթացող ակադէմիական կեանքը»։ Ստանալով ուսանողների երկրորդ բեզօլիւցիան—զինուորական մինիստրը որոշել է ակադէմիան փակել—ցնոր կարգադրութիւն։—Նոյեմբերի 2-ին գերմանական դեսպան Շէնը ունկնդրութեան է ընդունվել Թագաւոր Կայսրից։—Սենատը բացատրել է, որ քաղաքային միջոցներից կենսաթոշակներ և նպաստներ կարող են ստանալ սոսկ քաղաքային հիմնարկութիւններում ծառայող պաշտօնեաները—1870 թուին հրատարակած քաղաքային կանոնների համաձայն, պաշտօնեաների այրիները կարող են կենսաթոշակի կէսը ստանալ այն ժամանակ, երբ թոշակը նշանակված է ոչ թէ սովորական կարգով, այլ Բարձրագոյն հրամանով։

ԿԻԵՎ, 2 նոյեմբերի։ Զինուորա-յեղափոխական կազմակերպութեան ժողովին ձերբակալվածների թւում գտնվում են նաև հրացանագէզ գնդի 4 օֆիցէր և 2 պրօպօրչիկներ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերքաբուժութեան, վեներական (սիֆիլիս) մկզատեռ. հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժու իմն։
Զ. Ի. ԲԱՐԻՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Կ. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՂԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ճ. Գուբդինով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծաղկեստաւ.։

Վճարը 50 կ.։ չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

Բ Ժ Ի Շ Կ

Ա. Մ